ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 22.05.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 22.05.2019թ.)

Ա. Հակոբջանյանի (լիազորագիր, տրված՝ 23.05.2019թ.)

քննելով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Մ-3, Թուրքիայի սահման - Մարգարա - Վանաձոր - Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ104+700 - կմ107+900 հատվածի միջին նորոգման, Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ109+000 - կմ112+900 հատվածի միջին նորոգման, Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի

կմ67+240- կմ73+200 աջակողմյան և ձախակողմյան հատվածների և կմ72+200 – կմ73+183 հատվածի միջին նորոգման, Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ96+500- կմ106+100 հատվածի միջին նորոգման, Մ-5, Երևան -Արմավիր - Թուրքիայի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ11+850 - կմ14+400 աջակողմյան և կմ11+850 – կմ13+000 ձախակողմյան հատվածների միջին նորոգման, Մ-10, Սևան - Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ57+000 - կմ64+400 հատվածի միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված և 21.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ » ծածկագրով հրատապ մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել « ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստից՝ ani.petrosyan@mtcit.am, 03.05.2019թ. (ուրբաթ օրը) ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (ava2000.ltd@mail.ru)՝ ծանուցումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (ծանուցման արտատպումը կցվում է):

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն իր ava2000.ltd@mail.ru էլեկտրոնային փոսոտից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ ani.petrosyan@mtcit.am, 07.05.2019թ. ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույն արձանագրության 2.2 կետով որոշեց մերժել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը:

Տեղեկանալով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 15.05.2019թ. ներկայացել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել, որ սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի Անի Պետրոսյանի համակարգչից մուտ է գործել Ընկերության էլեկտրոնային փոստ և ցույց տվել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես արդեն նշվել է, «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին (ava2000.ltd@mail.ru) armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 03.05.2019թ. ստացել է ծանուցում, որի համաձայն Ընկերությանը առաջարկվել է ՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հանձնաժողովի քարտուղարի ani.petrosyan@mtcit.am էլեկտրոնային հասցեին:

Ընկերության էլեկտրոնային ava2000.ltd@mail.ru հասցեից 07.05.2019թ. (սահմանված ժամկետում և կարգով, երկրորդ աշխատանքային օրը) ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Վերոհիշյալ փաստը, այն է՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնելը, կարող է հաստատվել նաև համապատասխան ապացույցներով /կցվում է/:

Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, անհասկանալի պատճառներով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Ընկերությունը հայտնել է, որ տեղեկանալով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 15.05.2019թ. ներկայացել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել, որ սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի Անի Պետրոսյանի համակարգչից մուտք է գործել Ընկերության էլեկտրոնային փոստ և ցույց տվել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Արդյունքում «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցչին հայտնել են, որ Ընկերությանը պատկանող էլ. հասցեից Պատվիրատուն որևէ որակավորման փաստաթուղթ չեն ստացել և այդ հիմքով մերժել են Ընկերության ներկայացրած հայտը: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նաև հայտնել է, որ չի կարող վերագնահատել Ընկերության ներկայացրած հայտը և առաջարկել նշված խնդրի կապակցությամբ ներկայացնել բողոք՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, միայն ում որոշման հիման վրա հնարավոր կլինի վերագնահատել հայտը:

Վերոհիշյալը հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կարգի 43-րդ կետի պահանջների խախտմանը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ նմանատիպ փաստական հանգամանքներում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել են նմանատիպ բողոքները (օրինակ, ԳԲԽ-ԷՍ-2018/108,ԳԲԽ-ԷՍ-2018/79 և այլն):

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1.Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մրցույթի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մրցույթի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումից հետո 6-րդ չափաբաժնի մասով ընդունած բոլոր որոշումները:

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 22.05.2019թ. թիվ 08/15.3/6608-19 գրությամբ հայտնել հետևյալը.

Շինարարական աշխատանքներ ձեռք բերելու նպատակով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից կազմակերպված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ նույն ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ 03.05.2019թ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել, ուստի

գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 06.06.2019թ. թիվ 08/15.3/7274-19 գրությամբ հայտնել է, որ 05.05.2019թ.-ից մինչև 08.05.2019թ.-ը ընկած ժամանակահատվածում կրկին անգամ ստուգվել են նախարարության էլեկտրոնային հասցեների լոգերը, որտեղ վերը նշված՝ (ava2000.ltd@mail.ru) էլեկտրոնային հասցեից (ani.petrosyan@mtcit.am) էլեկտրոնային հասցեին գրություն առկա չէ:

Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ նշված ժամանակահատվածում (ani.petrosyan@mtcit.am) էլեկտրոնային հասցեն ստացել և պատասխանել է բավականին շատ գրություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.05.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով, որին 03.05.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Ընկերության «ava2000.ltd@mail.ru» էլ. փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի նշված էլ. փոստից 07.05.2019թ. ժամը 17:05-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «ani.petrosyan@mtcit.am» էլ. հասցեին ուղարկվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 22.05.2019թ. թիվ 08/15.3/6608-19 և 06.06.2019թ. թիվ 08/15.3/7274-19 գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր

ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուի կողմից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով, որին 03.05.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Ընկերության «ava2000.ltd@mail.ru» էլ. փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի նշված էլ. փոստից 07.05.2019թ. ժամը 17:05-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «ani.petrosyan@mtcit.am» էլ. հասցեին ուղարկվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, Ընկերության կողմից ներկայացված ապացույցի հավաստիությունը ստուգելու նպատակով և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, 27.05.2019թ. նշանակել է փորձաքննություն:

Փորձաքննության արդյունքում 30.05.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի «ava2000.ltd@mail.ru» էլ-փոստից ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից

կազմակերպված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «ani.petrosyan@mtcit.am» էլ-փոստին 07.05.2019թ. ժամը 17:05-ին ուղարկվել է էլեկտրոնային նամակ:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից համապատասխան ծանուցումն ուղարկելուց հետո (03.05.2019թ.) երեք աշխատանքային օրվա ընթացքում (07.05.2019թ.) «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, դրանով իսկ կատարելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 21.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով կայացված բոլոր որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**